ՍԿԻՀԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ԾԱԾԿՈՑՆԵՐ (ԺԷ.-Ի. ԴԱՐԵՐ)

ԱՆՆԱ ՕՆԱՆԵԱՆ
annaonanyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Յօդուածի նպատակն է ներկայացնել Հայ Եկեղեցուն նուիրաբերուած սկիհի ծածկոցների արձանագրութիւնները: Սակայն մինչեւ այն, հակիրճ կը նկարագրենք ծածկոցների գործառոյթները, դրանց տեղը եկեղեցում եւ նուիրաբերման նպատակները:

Ինչպէս Կաթոլիկ եւ Ուղղափառ, նոյնպէս եւ Հայ Առաքելական Եկեղեցում Պատարագի ժամանակ սկիհը ծածկւում է յատուկ ծածկոցով, որի վրայ ներքեւում դրւում է նշխարը: Եկեղեցու ծիսակարգերի ձեւաւորման փուլում սկիհները ծածկող «դաստառակը» ունեցել է գինին փոշուց պաշտպանելու գործառոյթ[1]: Միայն դարեր անց սկիհը ծածկող գործուածքը օրինուել է, քանի որ այն անմիջապէս առնչւում էր գինու եւ նշխարի հետ: Սկիհի ծածկոցը պէտք է լինի անթափանց, որպէսզի սկիհը չերեւայ: Բացի այդ, ծածկոցը լուանալուց յետոյ անհրաժեշտ է ջուրը ծաղիկների արմատներին լցնել[2]:

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՂԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Վաղագոյն սկիհի ծածկոցներն առնչւում են Բիւզանդիայի հետ: Բիւզանդական Եկեղեցում ասեղնագործ ծածկոցները նախատեսուած էին սրբազան անօթները, որմնախորշերը, զոհասեղանը ծածկելու կամ եկեղեցական երթերին ու թափօրներին օգտագործուելու համար: Քանի որ սկզբնական շրջանում դրանց գործառոյթները յստակեցուած չէին, հնարաւոր է, որ միեւնոյն ծածկոցը ծառայէր միքանի նպատակի: Ծածկոցներից նրանք, որոնք օգտագործւում էին հաղորդութեան ծէսին, դարձան սկիհի ծածկոցների նախատիպերը: Բիւզանդական վաղագոյն օրինակները Գերմանիայի Հալբերշտադ տաճարի զոյգ ծածկոցներ են՝ յունարէն արձանագրութեամբ եւ հաղորդութեան տեսարանով[3]: Դրանք Հալբերշտադտ են բերուել 4րդ խաչակրաց արշաւանքից եւ նուիրաբերուել տաճարին 1208ին: Մինչեւ հիմա յստակ չէ, թէ ո՞ր կաթողիկոսն է այն նուիրաբերել տաճարին, բայց հաւանաբար Կրոսիոն (1201-1208) է եղել: Ծածկոցները սեւ մետաքսի կտորից են, երկուսի դէպքում էլ Քրիստոսին ձախ կողմից մօտենում են վեցական առաքեալներ: Արձանագրութիւնների վերջում խորհրդանշական բառերն են՝ «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը» եւ «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի իմ արիւնը...»:

Ռուսական եկեղեցու պահպանուած ամենահին օրինակը թուագրւում է ԺԴ. դարով՝ 1389ով: Այն պահւում է Ռուսաստանի Պետական Պատմական Թանգարանում: Չափերով բաւականին մեծ է՝ 123x221 սմ: Ոսկեգոյն կտորի վրայ, կենտրոնում Քրիստոսն է ասեղնագործուած, կողքին աղօթքի

դիրքով՝ ձախից Տիրամայրը, Միքայէլ հրեշտակապետը, միտրոպոլիտներ Պետրոսն[4] ու Ալեքսէյը[5], իսկ աջից՝ Յովհաննէս Մկրտիչը, Գաբրիէլ հրեշտակապետը, միտրոպոլիտներ Մաքսիմն[6] ու Ֆէոգնոստը[7]: Ներքեւում ասեղնագործուած են իշխաններ, վերեւում չորս սերովբէներ, եզրագծում՝ հրեշտակներ ու հրեշտակապետեր, անկիւններում՝ աւետարանիչները: Օգտագործուած են ոսկեթել եւ արծաթաթել, գունաւոր մետաքսէ թելեր: Ունի արձանագրութիւն այն մասին, որ իրը ասեղնագործուել է իշխանուհի Մարիա Սեմիոնովնայի պատուէրով 1389ին[8]:

ԿԱԹՈԼԻԿ, ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բիւզանդիայում ծածկոցները կոչւում էին «աէռ»[9]: Յունարէն՝ ἀήρ, ռուսերէն՝ Воздýх, անգլերէն՝ Aër[10], ֆրանսերէն՝ l'Aër, հայերէն համարժէք բառ գոյութիւն չունի: Եթէ յունական եկեղեցում աէռը մէկն էր եւ ծածկում էր միանգամից սկիհն ու մաղզման[11], ապա ուղղափառ եկեղեցում այլ էր: Ուղղափառ եկեղեցում մաղզման տեսքով նման էր սկիհին՝ բաժակի ձեւ ունէր, ուստի սկիհը ծածկւում էր առանձին, մաղզման՝ առանձին, ապա միայն մէկ, չափերով աւելի մեծ ընդհանուր ծածկոցով: Ընդ որում, ուղղափառ եկեղեցում սկիհի ծածկոցն այնքան մեծ էր լինում, որ կարող էր մարմնակալի փոխարէն օգտագործուել[12] կամ ինչպէս հայերն են անուանում՝ գորփուրա[13]: Եթէ հաշուի առնենք այս տարբերութիւնները, ապա հայկական սկիհի ծածկոցը, որը հիմնականում միջին չափի է, աւելի շատ նման է յունական կամ բիւզանդական աէռին, եւ ոչ թէ ուղղափառ նմուշներին: Կարելի է ասել, որ հայկական ծածկոցները կաթոլիկ եկեղեցու ծածկոցներին են նման:

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ա) Հաւաքածոներ, ալպոմներ, գրականութիւն

Պահպանուած հայկական վաղնջագոյն օրինակը թուագրւում է 1688ով, պահւում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ալեք եւ Մարի Մանուկեան Գանձարանում (Գանձարան) եւ արձանագիր է: Աշխարհի տարբեր թանգարաններից եւ մասնաւոր հաւաքածուներից մենք գտել եւ խմբաւորել ենք ԺԷ.-Ի. դարերով թուագրուող 100ից աւել սկիհի հայկական ծածկոցներ, որոնց մեծամասնութիւնը արձանագիր է: Դրանք պահւում են Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանում (ՀՊՊԹ)[14], Էջմիածնի Գանձարանում[15], Էջմիածնի Թանգարանում, Սարդարապատի Յուշահամալիրի Հայոց Ազգագրութեան Թանգարանում[16], Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւններում, Պոլսի Պատրիարքարանում[17] եւ եկեղեցիներում[18], Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքում[19], Անթիլիասի Կաթողիկոսարանում[20], Վիկտորիա եւ Ալպերթ Թանգարանում[21], Հարվըրտի Համալսարանի Թանգարանում[22], Լեհաստանի Եագելոնեան Թանգարանում[23], Գալֆայեան[24], Գրիգոր Մարգարեան[25], Զարեհ Պտուկեան[26], Աշճեան[27], Քուէյթի[28] եւ այլ մասնաւոր հաւաքածուներում:

Մինչ այս սկիհի արձանագիր ծածկոցներ հրատարակել է Արգամ Այվազեանը՝ Գալֆայեան հաւաքածուի օրինակները[29], Եւգինէ Մուշեղեանը՝ ՀՊՊԹի նմուշները[30], սոյն յօդուածի հեղինակը՝ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան օրինակները[31]:

բ) Նկարագրութիւն

Ձեւով՝ ծածկոցները շրջանաձեւ են, քառակուսի, հազուադէպօրէն՝ ուղղանկիւն: Բոլոր ծածկոցները ասեղնագործուած են, ընդ որում եկեղեցական ասեղնագործութեան մէջ կիրառուող կարատեսակները տարբեւում էին կենցաղային կամ տարազային ասեղնագործութիւնից: Թէլերից օգտագործում էին ոսկեթէլը, արծաթաթէլը, մետաքսէ եւ բամբակէ թէլերը, հազուադէպօրէն՝ բրդեայ թէլեր: Ասեղնագործութեան տեսակներից էին լիցքը, հարթակարը, շղթայակարը, սուզանին, թէլքաշը, «Այնթապի», «Պոլսի»[32] ասեղնակարերը: Ծածկոցները ասեղնագործուելուց զատ յարդարւում էին նաեւ փուլերով, մարգարիտներով, ժապաւէններով, եզրային մասում՝ նաեւ ծոպերով: Ամենահետաքրքրական մասն էլ արձանագրութիւններն էին: Մարդկութիւնը վաղնջական ժամանակներից թողել է իր հետքը տարբեր վայրերում, դրոշմել եւ քանդակել է գրեր՝ սեպագրեր, պատկերագրեր, ժայռապատկերներ եւն.: Մաշտոցեան գրերի գիւտից իվեր հայը թողել է տաճարի պատկերներն ամէնուր՝ խաչքարերի, եկեղեցիների, դրամների, տարաբնոյթ այլ յուշարձանների վրայ: Արձանագրութիւնները, որպէս կանոն, իրենց բնոյթով կարող են լինել յիշատակագրային, շինարարական, նուիրատուական, իրաւա-կանոնական, կրօնա-բարոյախօսական[33]:

Հիմնականում արձանագրութիւնների համար օգտագործում էին երկաթագիր, հազուադէպ՝ նոտրգիր: Տեղի սակաւութեան պատճառով օգտագործում էին միքանի հնարքներ՝ համառօտագրութիւն, կցագրութիւն: Կիրառուել են փակագրեր, բարբառային բառեր, փոխառութիւններ օտար լեզուներից, յատկապէս՝ թուրքերէնից:

Քանի որ սկիհի ծածկոցները նուիրաբերւում էին եկեղեցուն, ապա տեղեկութիւններ էին պարունակում նուիրողի եւ ստացողի մասին: Հայ միջնադարեան՝ Թ.-ԺԴ. դարերի վիմագիր արձանագրութիւնների ուսումնասիրմամբ զբաղուել է Լեւոն Սարգսեանը: Նա մանրամասն ներկայացրել է արձանագրութիւնների բովանդակութիւնը: Դրանց շնորհիւ պարզ է դառնում, որ հայերը տարբեր առիթներով եկեղեցուն նուիրել են գրքեր, ձեռագիր մատեաններ, սրբազան մասունքներ, խաչեր, քշոցներ, սկիհներ, կանթեղներ, անգամ գինի եւ կանխիկ դրամ որպէս «հոգոյ բաժին», «հոգոյ թոշակ»: Սարգսեանը նաեւ նշում է, որ եկեղեցիների մատեաններում եւ «արխիւում» նուիրաբերուած իրի կամ գումարի դիմաց գրւում էր նուիրաբերման նպատակը՝ «հարիւր դահեկան ի շինութիւն ժամատանս» եւն.[34]:

Մեր ուսումնասիրման առարկայ սկիհի ծածկոցները անմասն չեն մնացել արձանագրութիւններից: Դրանք հիմնականում ասեղնագործուած են, իսկ տպագիր կամ դաջազարդ արձանագրութիւններ չեն գտնուել:

գ) Արձանագրութիւնների բովանդակութիւնը

Իրենց բովանդակութեամբ սկիհի ծածկոցների արձանագրութիւնները կարող ենք համարել յիշատակագրային, որոշ առումներով նաեւ՝ նուիրատուական: Յիշատակագրային են կոչւում այն արձանագրութիւնները, որոնցում յիշատակւում են հանգուցեալի հակիրճ տուեալները՝ ազգանունանունը, տոհմային պատկանելութիւնը, մասնագիտութիւնը կամ զբաղուածութիւնը, հասարակութեան մէջ ունեցած դիրքը, պաշտօնը[35]: Նուիրատուական արձանագրութիւններում սովորաբար թուարկւում էին եկեղեցուն նուիրաբերուող գոյքը՝ դրա դիմաց ստանալով պատարագի ժամեր[36]:

Աստուածաբանական մեկնութիւնների Ժ. դարի հեղինակ Խոսրով Անձեւացին, իր *Սուրբ Պատարագի Մեկնութիւն* աշխատութիւնում, մէջբերելով «*Յիշի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր եւ օրհնի՛ր Քո սուրբ Եկեղեցու ընծայաբերներին, նաեւ նրանց, ովքեր ողորմածութեամբ յիշում են աղքատներին, եւ Քո ընդաբոյս առատաձեռնութեամբ պարգեւիր նրանց խնդրանքները՝ հարիւրապատիկն այստեղ եւ հանդերձեալում*» խօսքերը, մեկնաբանում է. «*Ոմանք սրբազան սպասքներ են ընծայում Եկեղեցուն, ոմանք՝ Աստուածաշունչ գրքեր, ոմանք էլ նուիրաբերում են կալի ու հնձանի բերքից եւ անասուններից, ըստ իրենց կարողութեան ընծայաբերում են նաեւ փրկչական տօներին ու սրբերի յիշատակութեան օրերին: Ուստի մենք խնդրում ենք նրանց, ինչպէս նաեւ ողորմածների համար, ովքեր իրենց ունեցուածքից բաժին են հանում աղքատներին...*»[37]: Այլ կերպ ասած, մարդիկ եկեղեցուն զանազան իրեր եւ ընծաներ էին նուիրաբերում, այդ թւում սկիհի ծածկոցներ, որպէսզի արժանանան Աստծոյ ներման եւ մեղքերի թողութեան: Եւ իսկապէս, դարեր շարունակ հենց այս նիւթական նուիրաբերութիւնների հաշուին էլ գոյատեւել է հայոց եկեղեցին:

Ինչպէս վիմագիր արձանագրութիւները, սկիհի ծածկոցների արձանագրութիւնները եւս ունէին *կաղապարներ*: Հիմնական օրինակներ են.-

1 . ՅԻՇԱՏԱԿ Է	2. ՅԻՇԱՏԱԿ Է ԾԱԾԿՈՑՍ
3. ՅԻՇԱՏԱԿ Է ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՍ	4. ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԷՐՍ
5. Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ	6. ԸՆԾԱ[Յ]ԵՑ

Որպէս կանոն, արձանագրութիւնները սկսւում են այս կաղապարներով, ապա նշւում է կա՛մ եկեղեցու անունը, որին նուիրաբերւում է ծածկոցը, կա՛մ նուիրաբերողի անունը, իսկ երրորդ տարբերակը՝ յիշատակւում են այն անձանց անունները, ում հոգու փրկութեան համար է պատրաստուել տուեալ ծածկոցը: Ընդ որում, յիշատակւում են ե՛ւ ողջերի անուններ, ե՛ւ մահացածների անուններ՝ օգտագործելով տարբեր աստիճաններ՝ «կենդանեաց» «հանգուցեալ», «ննջեցելոց», «մահտեսի» [38] եւն.: Արձանագրութիւնների այս բովանդակութիւնը ունի իր բացատրութիւնը: Յիշենք, որ սկիհի ծածկոցն օգտագործւում է պատարագի ժամանակ, իսկ պատարագը մատուցւում էր, որ հաւատացեալը հաղորդուի Քրիստոսի հետ եւ հոգու փրկութիւն

ստանայ: Այս ամբողջ խորհրդաբանութիւնը բաւականին մանրամասն բացատրել է Անձեւացին իր վերոյիշեալ աշխատութեան մէջ:

«*Ի Քրիստոս հաւատով ննջած տղամարդկանց եւ կանանց յիշատակը թող լինի*» տողերը Անձեւացին մեկնաբանում է, որ.-

Աստծոյ բազում եւ զանազան երախտիքների դիմաց Աստծուց շնորհ ստացանք փոխհատուցելու Նրան սուրբ Պատարագի՝ Քրիստոսի ընծայմամբ, ինչի միջոցով յիշելով Աստծոյ կատարած բոլոր բարերարութիւնները՝ ամէն ինչի համար գոհութիւն ենք մատուցում... Ապա երկնաւոր Հօր առջեւ բարեխօս ունենալով Քրիստոսի՝ մեզ համար եղած մահը եւ սրբերի ճգնութիւնը՝ գոհանում ենք սուրբ Խորհրդով՝ բոլոր հաւատացեալների՝ թէ՛ ողջերի եւ թէ՛ ննջեցեալների համար: Քանզի ինչպէս որ մենք, սրբերի հետ ցնծալով, Աստծուն ընծայ եւ գոհութիւն ենք մատուցում՝ նրանց պսակումը մերը համարելով, այդպէս եւ նրանք, իբրեւ իրենց անդամների, խնամակալ են լինում մեզ՝ բարեխօսելով Տիրոջը, մանաւանդ ահաւոր Պատարագի ժամանակ...[39]:

Յիշի՛ր, Տէ՛ր, նաեւ նրանց, ովքեր յանձնարարեցին աղօթել իրենց համար...:

Յիշի՛ր, Տէ՛ր, Քեզ վրայ իրենց յոյսը դրած ննջեցեալների հոգիները»:

Քանի որ հրաման ունենք խնդրել հաւատով ու յոյսով ննջածների համար, ուստի սարկաւագը խնդրում է յիշել Նրա վրայ իրենց յոյսը դրած ննջեցեալների հոգիները[40]:

Արձանագրութիւնների դասաւորուածութիւնը

Ըստ արձանագրութեան դասաւորուածութեան՝ ծածկոցները կարող ենք միքանի խմբի բաժանել: Արձանագրութիւնները ծածկոցների վրայ դասաւորւում էին ամենակարեւոր հատուածում՝ կենտրոնում, որը սովորաբար առանձնացուած էր լինում: Ասեղնագործւում էր շրջանակ, որի մէջ Աստծոյ գառան, Խաչի, Խաչելութեան, Սկիհի, Սկիհի մէջ Քրիստոսի, որոշ դէպքերում նաեւ արեւի եւ հրեշտակի պատկերներ են ասեղնագործուած: Կենտրոնական ընդգծուած այս հատուածը առանձնացուած էր սկիհի չափերին համապատասխան: Այսինքն, կարելի է ասել, որ արձանագրութիւնը երեւացող տեղում էր արւում: Բերենք միքանի օրինակներ.-

❋ ՀՊՊԹի համար 1712 ծածկոցը, որը սեւ թանգիֆէ կտորից է, ունի հետեւեալ արձանագրութիւնը.- Յ(Ի)Շ(Ա)ՏԱԿ Է ՍԷԹԵՆՃԻ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ Ի ԻԶՄՈՒՐԷ ԱՌ ՔԻ ԹՎ(ԻՆ) ՌՄԼ[41]:

❋ՀՊՊԹի համար 1764 ծածկոցը, որի կենտրոնում՝ ճաճանչների շուրջը, շրջանակի մէջ վերցուած է հետեւեալ արձանագրութիւնը.-

Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ԻԶՄԻՐՅԻ ՔԻԼՃԱՆՃԻ ՕՂԼՈՒ ԳՐԻԳՈՐԻ ՈՐ(Դ)Ի ԱԴԱՄԻՆ, Ս(ՈՒՐ)Բ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ Թ(ՎԻ)Ն ՌՄԽԲ[42]:

❀ Երկու շրջանակով արձանագրութիւն ունի Էջմիածնի Թանգարանի 1961 համարի ծածկոցը: Այն երկնագոյն մետաքսից է, շրջանաձեւ է, կենտրոնում գառն է.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ԾԱԿՈՅՍ ՄԵԼՔՈՆԻՆ ԴՍՏԵՐՆ ԵՂԻՆԷԻՆ ՀՈԳՈՒՆ Ի Դ(ՈՒՌ)Ն Ս(ՈՒՐ)Բ ՆԻԿՈՂԱՈՍ(Ի):

❀ ՀՊՊԹի համար 1711 ծածկոցի վրայ Աստծոյ գառան շուրջը՝ մինչեւ ասեղնագործ ճաճանչները, երկշարք արձանագրութիւն կայ.- Յ(Ի)Շ(Ա)Տ(ԱԿ) է ՍԿՀԻՈՅ ԾԱԾԿՈՅՍ Ի ԴԻԼԻՊԷ ԲՆԱԿԵԱԼ ԴԱՒԻԹ ԱՂԱՅԻ ԿԵՆԴԱՆՈ ԶԱՒԱԿԱՑ՝ ՍԱՐԳՍԻՆ, ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ԵՒ ԵՓՐՈՍԻՆԷԻՆ, ՈՐՔ ԵՏՈՒՆ Ի Ս(Ր)Բ(Ո)Յ ԷՋՄԻԱԾԻՆ ՁԵ(ՌԱՄԲ) Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏ(Ո)ՒՐ ԵՊ(Ի)Ս(ԿՈՊՈՍ)ԻՆ[43]:

❀ Միւս օրինակը Գալֆայեան Հաւաքածուից մետաքսէ մի ծածկոց է.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ԾԱԾԿՈՅՍ ՊԵՆԷԿԵԱՆ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ԸՍՏԵՓԱՆԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆԳՆ Թ(ՎԻ)Ն ՌՄԾ(1801) ԻՆ[44]:

Յաջորդ խմբի ծածկոցների արձանագրութիւնները կենտրոնում, սակայն քառակուսի դասաւորուած են.-

❀ՀՊՊԹ, համար 1759, թանզիֆից ծածկոց է: Արձանագրութիւնը ճաճանչներից բաւականին հեռու է տեղադրուած.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ՀՈՎ(Ա)ԿԻՄԻՆ, ԱՆՆ(Ա)ՅԻՆ, ՎԱՐԴԵՆԻԻՆ Ի Դ(ՈՒ)ՌԸՆ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԻՆ, ՈՐ Ի ՏԸՐԱՊԻԶՕՆ: ՌՄԽԹ[45]

❀ՀՊՊԹ, համար 1790, արձանագրութիւնը.- ՅԻՇԱՏԱԿ է ԾԱԾԿՈՅՍ ՀԵՂԻՆԱՅ Թ(ՎԻ)Ն ՌՄԾ ԱՄԷՆ[46]:

Արձանագրութիւնը կարող է ունենալ շրջանաձեւ դասաւորութիւն եզրերով, օրինակ Սանահինից վարդագոյն մետաքսից մի ծածկոց.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է ԾԱԾԿՈ(Ց)Ս Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ԱԿՍԷՆՏԻՆ ԴՍՏԵՐՆ ԱԼՄԱՍ(Տ)ԻՆ ՀՈԳՈՒՆ, Ի Դ(ՈՒ)ՌՆ Ս(ՈՒ)ՐԲ ՍԱՐԳՍԻՆ: Թ(ՎԻՆ) ՌՄԺ

Կան նաեւ արձանագրութիւններ, որոնք կենտրոնում շրջանաձեւ են եւ ապա շարունակւում են եզրերով.-

❋ Նմուշ Գալֆայեան Հաւաքածուից, ԺԹ. դար, կենտրոնական կլոր ծաղկի շուրջը շրջանաձեւ տեղաւորուած է հետեւեալ արձանագրութիւնը.- Յ(Ի)Շ(ԱՏԱԿ) Է ՄԻԼՔԷՃԻ ՁԱՏԷ ՄԱՀ(ՏԵՍ)Ի ՏԱՏՈՒՐԻՆ ՈՐԴՈՅՆ ՅԱԿՈԲԻՆ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՅԱՐՈՒԹԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԹՈՐՈՍ ապա զամբիւղաձեւ ծաղկազարդերի միջեւ ձախից աջ գրուած է ԼՈՒՍԱԻՆ ՀԱՆԱՄԻՆ ԹԱԳՈՀԻ Ի ԳՈՒՂՆ Թ. ԱՒՆՍՈՒՆ ԵՂԻՍԱԲԷԹ[47]:

Ծաղկոցների միւս խմբի դէպքում արձանագրութիւնը միայն եզրային մասում է, երբեմն միայն մէկ կողմում, երբեմն էլ չորս կողմով:

❋ Միայն մէկ կողմում եւ մէկ տողով արձանագրութիւն ունի 1688ի էջմիածնում պահուող ծաղկոցը, որի կենտրոնում արեւի պատկեր կայ.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԾԱԾԿՈՅՍ ԱՂԱՄԱԼԻՆ Կ(Ո)Ղ(Ա)ԿՅԻՆ ՁԻՓԻՐԹԷ ՈՐԴՈՅՆ ՄԻՐԶԷ ԹՎ (ԻՆ) ՌԾԿԷ[48]:

❋ Միայն մէկ տողով արձանագրութիւն ունի Պոլսի Գումգափու թաղամասի Ս. Աստուածածնի եկեղեցում պահուող ԺԸ. դարի ծաղկոցը.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՍԿԻՀԻ Ծ(ԱԾ)Կ(ՈՅ)Ն Ի ԿՐԻՏԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՈՐ Ս(ՈՒՐ)Բ ԿԱՐԱՊԵՏ ՏԻՐԱՅՈՒ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՊԱՐՕՆ ՍՏԵՓԱՆ[49]:

❋ Միայն մէկ կողմում արձանագրութիւն ունի էջմիածնի Գանձարանում պահուող 1862ի ծաղկոցը: Ասեղնագործուած է Տիրամայրը մանկան հետ Օդիգիտրիա պատկերագրութեամբ[50], իսկ արձանագրութիւնը պատկերից ներքեւ է՝ չորս տողով.- ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏԿԷՐՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ ԲՆԱԿԻՉ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՅԱՐՈՒԹԻՆ, ԵՂՊԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՐԱ(ՊԵՏ)ԻՆ ՍԱՌԱՃԻԱՆՑ Ի ՄՇՈՒ Ս(ՈՒ)ՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ:

❋ Եզրային մասում, չորս կողմով արձանագրութիւն ունի Վիկտորիա եւ Ալպերթ Թանգարանի համար 1014-1898ը՝ 1800ի.- ՅԻՇԱՏԱԿԷ ՍԿԻՀԻ ԾԱԾԿՕՅՍ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՍԱՀԱԿԻՆ, ՄԱՐԳԱՐԻՏԻՆ, ԹԱԳՈՒՀԻ եւ ՍՐԲՈՒՀԻԻՆ եւ ԿԵՆԴԱՆԻՔ ՆԻԳՈԴԵՄՕՍԻՆ, ՍԱՌԱԻՆ, ՄԱՐԳԱՐՏԻՆ, ՍԱՀԱԿԻՆ, Ի ԳԻՒՂՆ ՏԻՎՐԻԿ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ, Ի ԹՈՒԻՆ ՄԵՐՈՅ ՌՄԽԹ[51]:

Արձանագրութիւնները բոլորգիր են, ասեղնագործուած, օգտագործուած են մետաքսէ, բամբակէ թելեր, ոսկեթել, արծաթաթել: Հիմնականում հարթակար են կամ շղթայակար:

Ամենաշատ օգտագործուող համառօտագրութիւններն են.- Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի, Ս(ՈՒՐ)Բ, ՍԿԻ(ՀԻ), Թ(ՎԻ)Ն, ՀԱՆԳ(ՈՒՅԵԱ)Լ, ԵԿ(Ե)Ղ(Ե)ՑԻ(Ո)ՅՆ: Համառօտագրութիւնների կիրառումը նպատակայարմար էր՝ տեղի տնտեսման համար: Երբեմն արձանագրութիւններում նկատելի է, որ ասեղնագործողը ճիշտ չի հաշուարկել տարածքը, եւ ընդամէնը մէկ բառ չի տեղաւորուել եւ գրուել է նոր տողից: Շատ դէպքերում էլ տողն աւարտուել է, բայց բառը կիսատ է մնացել (սա նաեւ ընդունուած երեւոյթ է հայ միջնադարեան վիմագրութեան մէջ):

Լայնօրէն կիրառուել են նաեւ կցագրութիւններ.-

Մ Սի, Եւ Եւ, Կա Կա, Կս Կս, Մբ Մբ, Նա Նա, Որ որ

Սկիհի ծածկոցների դէպքում յիշատակւում են նաեւ այն վանքերի անունները, որոնց նուիրաբերւում են, ստացող հոգեւորականների անունները, գիւղերի, քաղաքների անուններ: Այսպիսով յաճախ յիշատակուած են այնպիսի եկեղեցիների անուններ, որոնք քանդուած են: Այս առումով արձանագրութիւնները հարուստ ազգագրական, պատմական, լեզուաբանական նիւթ են պարունակում:

Անձնանուններից հանդիպում են՝ Աբրահամ, Աղամալ, Այվազ, Աննա, Առաջպար, Ասլիկ, Բարսղ, Բրափիեօն, Գաբրոշ, Գասպար, Գրիգոր, Դաւիթ, Երեմ, Եփրաքսի, Եփրոսինէ, Զանազան, Զարմազան, Թագուհի, Թակոր, Թորոս, Թուրվան, Լիանա, Լութֆի, Կիւրեղ, Համասփիւր, Ղազար, Մալխաս, Մամիկոն, Մարգարիտ, Մարտիրոս, Մերեմ, Մեյրեմ, Մինաս, Միրզէ, Յերիքնազ, Նոէմզար, Նիկոդեմոս, Շահզեւոէ, Ոհանէս, Ովսաննա, Պօղոս, Սահակ, Սամուէլ, Սառա, Սարգիս, Սիմաւոն, Սինոր, Ստեփանոս, Սրբուհի, Տիրուհի, Փանի եւն.:

Աւելի հետաքրքիր էին ազգանուան դեր կատարող մակդիրները՝ երբեմն տոհմանուններ, երբեմն բնակավայրերի անուններ.- Ագուլեցի, Թէքէեան, Իզմիրցի, Կամախեցի, Միջաղեղցի[52], Պաղտատցի, Պեկօղլուցի, Պենէկեան, Սէթենճի, Տագեսեան, Ֆիլիպէցի:

Հանդիպում են որոշ մասնագիտութիւնների անուանումներ կամ դիմելաձեւեր՝ Աղա, Թիւթիւնճի, Հայրապետ, Հացագործ, Ոսկերիչ, Քիլճանճի Օղլու եւն.:

Արձանագրութիւններում յիշատակուած են Արաբկիրի Ս. Աստուածածին (կոց. 1249), Արմաշի Զարխափան Աստուածածին (կոց. 1416), Զմիւռնիայի Ս. Թադէոս, Կեսարիայի Թոմարզա Ս. Աստուածածին (կոց. 1516), Մշոյ Ս. Կարապետ եկեղեցիները (ըստ աւանդութեան կառուցել է Գրիգոր Լուսաւորիչը), Էջմիածնի մայր տաճարը (ըստ աւանդութեան կառուցել է Գրիգոր Լուսաւորիչը), Տիւրիկի Ս. Գրիգոր Լուսաւորիչը, Տրապիզոնի Ս. Աստուածածինը, ինչպէս նաեւ Ս. Մինաս, Ս. Սարգիս, Ս. Ստեփանոս Նախավկայ, Ս. Յակոբ անուանումներով մեզ համար անյայտ եկեղեցիները[53]:

Թուակիր օրինակներում հանդիպում ենք յաճախ տառային, հազուադէպ թուային արձանագրութիւններ: Միայն ԺԹ. դարից սկսած սկիհի ծածկոցների արձանագրութիւններում թուականը գրուած է թուով:

Ներկայումս սկիհի ծածկոցների նուիրաբերումը եկեղեցիներին տարածուած է հաւատացեալների շրջանում: Հիմնականում ծածկոցը նուիրւում է հանգուցեալի կամ ողջի հոգու հանգստութեան համար: Այժմ կարող ենք տեսնել ասեղնագործ, տպագիր, մեքենակար ծածկոցներ: Աւելացել են նաեւ ասեղնագործութեան տեսակները՝ Մարաշի հիւսուած կար, հելունագոր-

ծութեան եւ կտորի համադրում, շարունակւում են օգտագործուել փուլերը եւ մնացած քարերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ԺԷ.-Ի. դարերի սկիհի ծածկոցների արձանագրութիւնները ասեղնագործուած էին մետաքսէ, բամբակէ թէլերով, ոսկեթէլով եւ արծաթաթէլով: Դրանք կարող էին լինել ծածկոցի վրայ տարբեր դասաւորութեամբ՝ շրջանաձեւ՝ ե՛ւ կենտրոնում, ե՛ւ եզրերում, ուղղանկիւնաձեւ՝ ե՛ւ կենտրոնում, ե՛ւ եզրային մասում, միայն որպէս եզրագօտի: Երբեմն վերցուած էին ձեւաւոր շրջանակների կամ օղագօտիների մէջ, կարող էին լինել մի կամ երկու տողով, որոշ դէպքերում նաեւ չորս տողով: Բովանդակութեամբ յիշատակագրային էին. յիշատակւում էին մահացածների եւ ողջերի անուններ, նրանց տոհմանունները, մասնագիտութիւնները: Հանդիպում են նաեւ աշխարհագրական տեղանունների, եկեղեցիների, վանքերի, պատարագիչ քահանաների անուններ: Գիրը բոլորգիրն էր, յաճախ կիրառւում էին կցագրութիւններ եւ համառօտագրութիւններ, մեծ մասը նաեւ թուակիր էր: Արձանագրութիւնները ազգագրական, աշխարհագրական, պատմական մեծ կարեւորութիւն ունէին:

Սկիհի ծածկոցներ.- ԺԸ. դար՝ Պոլսի Գումգափուի Ս. Աստուածածնի եկեղեցի եւ՝ 1862 (Էջմիածին)

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ըստ Մաղաքիա Արք. Օրմանեանի «բարեպաշտուհիները», յատկապէս նոր ասեղնագործել սովորող օրիորդները, ասեղնագործում էին դաստառակներ եւ նուիրում եկեղեցուն (Մ. Օրմանեան, *Ծիսական Բառարան*, Անթիլիաս, ՏՄՏԿԿ, 1979, էջ 111):

[2] Սուրէն Արք. Գաթարոյեան, *Ծիսական Գիտելիքներ*, Թեհրան, Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք, 2017, էջ 121-22:

[3] P. Johnstone, *The Byzantine Tradition in Church Embroidery*, London, Alec Tiranti, 1967, էջ 114-15:

[4] Պետական, եկեղեցական գործիչ, ապրել է ԺԳ.-ԺԴ. դարերում: Մետրոպոլիտը եպիսկոպոսի կամ թեմական առաջնորդի տիտղոս էր:

[5] Կիեւեան Ռուսաստանի եպիսկոպոս, պետական գործիչ եւ դիւանագէտ, ապրել է ԺԴ. դարում, մահուանից 50 տարի անց սրբադասուել է:

[6] ԺԳ. դարի եպիսկոպոս:

[7] ԺԴ. դարի կէսերի եպիսկոպոս:

[8] Н. Маясова, *Древнерусское Шитье/La Broderie Russe Ancienne*, Մոսկուա, Իսկուստվօ Հրատ., 1971, էջ 10-11. նոյնի՝ *Древнерусское Лицевое Шитье. Каталог /La Broderie Faciale Russe Ancienne*, Մոսկուա, Կրասնայա Պլոշադ, 2004, էջ 22:

[9] Johnstone, էջ 21:

[10] Թարգմանաբար նշանակում է «օդ»:

[11] Եկեղեցական սպասք, որը ծածկում է սկիհը, եւ որի ներքեւում դրւում է նշխարը:

[12] «*Մարմնակալ - Սկիհին փակը պապարագի ատեն յատկապէս դրուած մաքուր կտաւը կամ զարդարուն փոքրիկ դասպառակը*» (Օրմանեան, էջ 157):

[13] «*Գորփուրայ բառը լատիներէն գորփորալիս = corporalis, կը նշանակէ «մարմնական», այլ աւելի մերձաւորութեամբ թարգմանուած է մարմնակալ: Քառակուսի ճերմակ կտաւ զոր լատինածէս ժամարարը սեղանին վրայ կը փռէ իր առջեւ եւ ոչ միայն սկիհն անոր վրայ կը դնէ, այլ եւ սրբագործեալ նշխարն առանց մաղզմայի ուղղակի այդ կտաւին վրայ կը հանգչեցնէ: Ասկէ նոյն կտաւին աւելի պատիւ մը՝ ուղղակի խորհրդական մարմնոյն հետ շփմանը համար, եւ սրբազնագործեալ նշխարին փշուրները նոյն կտաւին կպուած կրնալ ըլլալուն կասկածով...*» (Օրմանեան, էջ 106):

[14] Ի. Մկրտչեան, Լ. Խաչատրեան, *Ճանաչիր Քո երկիրը*, Երեւան, Հայաստանի Պատմութեան Թանգարան, 2019, էջ 78, 83. նաեւ՝ *Ors et Trésors d'Arménie, Catalogue de l'Exposition*, Լիոն, 2007, էջ 118-19. նաեւ՝ M. Ferenc, *Örményország Kincsei: Titkok az Ararátról: [Fotoalbum], A Katalógust Szerkesztették*, Magyar Köztársaság elnöke, Պուտափեշթ, 2002:

[15] *Էջմիածնի Գանձեր, Ալբոմ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, կազմ.՝ Մանիա Ղազարեան, 1984, էջ 284-93. նաեւ՝ *Սուրբ Էջմիածնի Գանձերն Աշխարհի Թանգարաններում*, կազմ.՝ Տ. Ասողիկ Քինյ. Կարապետեան, Էջմիածին, «Տիգրան Մեծ» Հրատ., 2008. նաեւ՝ *A Legacy of Armenian Treasures: Testimony to a People: The Alex and Marie Manoogian Museum*, by Edmond Y. Azadian, Alex and Marie Manoogian foundation, Michigan, 2013:

[16] *Յակոբ Ճէլալեանի Նուիրատուութիւնների Կատալոգ*, կազմ.՝ Ս. Պողոսեան եւ ուրիշն., Երեւան, «Տիգրան Մեծ», 2008, էջ 162:

[17] Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի Անուան Թանգարան, կազմ.՝ Վ. Սերոբեան, Ստամբուլ, 2011, էջ 2. նաեւ՝ Ronald T. Marchese, Marlene R. Breu, *Splendor & Pageantry: Textile Treasures from the Armenian Orthodox Churches of Istanbul*, Armenian Patriarchate of Istanbul, Իսթանպուլ, Citlembik Film Video Yapim Ceviri, 2010:

[18] Ronald T. Marchese, Marlene R. Breu եւ ուրիշն., *Treasures of Faith: Sacred Relics and Artifacts from the Armenian Orthodox Churches of Istanbul*, Իսթանպուլ, 2015, էջ 276-77:

[19] *Album of the Armenian Monastery of Jerusalem*, կազմ. S.W.M, Նիւ Եորք, The Delphic Press, 1950, էջ 39. նաեւ՝ Գ. Յովսէփեան, «Հայ Արուեստի Օրինակներ Երուսաղէմի Վանքից», *Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի Պատմութեան, Հտր. Բ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտ, 1983, էջ 252-260:

[20] H. Goltz, *Der Gerettete Schatz der Armenier aus Kilikien, Sakrale Kunst aus dem Kilikia-Museum Antelias*, Լիբանան, 2000:

[21] http://collections.vam.ac.uk/item/O172544/chalice-veil-unknown/ :

[22] https://www.harvardartmuseums.org/art/215237 :

[23] J. Sławińska, J. Osiecki, *Velum Ormiańskie ze Zbiorów Muzeum Uniwersytetu Jagiellońskiego*, "Lehahayer. Czasopismo Poświęcone Dziejom Ormian polskich", 2018, N5, էջ 195-243:

[24] Արգամ Այվազեան, *Մշակութային Արժէքների Գալֆայեան Հաւաքածոյի Արձանագիր Իրերը*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2013, էջ 160-70. նոյնի՝ *Գալֆայեան Հաւաքածոյի Մշակութային Արժէքներ, Պրակ IV, Հայկական Կիրառական Արուեստի XVI-XIX դդ. Մետաղեայ Իրեր եւ Գործուածքներ*, Երեւան, Հեղինակ. Հրատ., 2016, էջ 46-53, 60-65. նոյնի՝ *Եղեռնից Փրկուած Նորայայր Մասունքներ. Մեզ Պէտք են Մտքի Ջօրավարներ, Հտր. Բ.*, Երեւան, Հեղինակ. Հրատ., էջ 116-9:

[25] http://armenianartworks.com/armenianartworks.com/ :

[26] *Հայ Հիւսուածեղէնի Արուեստ, Յուցահանդէսի Կատալոգ*, կազմ.՝ Փ.Ջ. Պտուկեան, Նիւ Եորք, 1980, էջ 10-11:

[27] R. H. Kévorkian et Berdj Achdjian, *Tapis et Textiles Arméniens*, Maison Armenienne, Մարսէյ, 1991, էջ 147-155. նաեւ՝ https://textilum.wordpress.com/2014/09/18/armenian-rugs-and-textiles/ :

[28] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=2896889507020151&id=139336529442143 :

[29] Այվազեան, *Մշակութային Արժէքների*, էջ 160-70:

[30] Ե. Մուշեղեան, *Յատկանշական Յուցակ Թանգարանային Ժողովածուների, Պրակ 1, Հայերէն Արձանագրութեամբ Առարկաներ*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1964, էջ 175:

[31] Ա. Օնանեան, «Մխիթարեան Միաբանութեան Սկիհի Ծածկոցները», *Էջմիածին Ամսագիր*, 2019:Ա, էջ 132-40:

[32] Ընդունուած էր նաեւ ասեղնագործութեան տեսակները անուանել այն տեղանքի կամ քաղաքի անունով, որտեղից ծագել էր: Բնականաբար այս տեսակը տարածում էր Հայաստանով մէկ, սակայն անուանւում էր ըստ ծագման տեղի:

[33] Գ. Գրիգորեան, *Հայկական Վիմագրութիւն, Համառօտ Ձեռնարկ Բուհերի Պատմութեան եւ Բանասիրութեան Ֆակուլտէտների Համար*, Երեւան, Զանգակ-97, 2000, էջ 67-82:

[34] Լ. Սարգսեան, *Հայաստանի Նուիրատուական Արձանագրութիւնները (9-14րդ Դարեր)*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2007, էջ 79-82:

[35] Գրիգորեան, էջ 67:

[36] Լ. Սարգսեան, էջ 93-4. նաեւ՝ Գրիգորեան, էջ 74:

[37] Խոսրով Անձեւացի, *Սուրբ Պատարագի Մեկնութիւն*, գրաբարից թարգմ.՝ Գէորգ Աբղ. Սարոյեան եւ Մկրտիչ Աբղ. Պռոշեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Երեւան, 2001, էջ 78:

[38] Մահտեսի (մղդեսի, մղդսի, մուխսի, հաճի), արաբ. Mugdisi - նշանակում է Երուսաղէմ ուխտի գնացած. օգտագործում է որպէս մակդիր՝ յատուկ անունից առաջ (Ս. Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հտր. 3*, Երեւան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատ., 1944, էջ 244):

[39] Անձեւացի, էջ 74-75:

[40] Անձեւացի, 82 էջ:
[41] Մուշեղեան, էջ 106:
[42] Մուշեղեան, էջ 110:
[43] Մուշեղեան, էջ 125:
[44] Այվազեան, *Մշակութային Արժէքների*, էջ 169:
[45] Մուշեղեան, էջ 113:
[46] Նոյն:
[47] Այվազեան, *Գալֆայեան Հաւաքածոյի Մշակութային Արժէքներ, Պրակ IV*, էջ 52-3. նաեւ՝ Այվազեան, *Մշակութային Արժէքների*, էջ 165:
[48] 1137+551՝ 1688: Ցանկացած թիւ ստանալու համար նախ գտնում ենք տառերին համարժէք թուագրումը, ապա գումարում 551՝ հայոց մեծ թուականը:
[49] Marchese, Marlene, *Splendor & Pageantry*, էջ 245:
[50] Ք. Աւետիսեան, *Աստուածածնի Պատկերագրութիւնը Հայ Միջնադարեան Արուեստում*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2015, էջ 256:
[51] http://collections.vam.ac.uk/item/O172544/chalice-veil-unknown/ , տե՛ս նաեւ՝ Sławińska, Osiecki, էջ 195-243:
[52] «Միջաղեղցի» ասելով հաւանաբար նկատի ունի Կ. Պոլսի Միջագիւղ թաղամասը՝ թուրք.՝ Ortaköy, անգլ.՝ Middle Village, բառացի թարգմանութեամբ՝ Միջին գիւղ: Այն Վոսփորի նեղուցի եւրոպական ափին է: Հայերն այստեղ մեծ թիւ էին կազմում, 1785ին հիմնել էին Թարգմանչաց Վարժարանը, որը բազմաթիւ հայ մտաւորականների է տուել պատմութեանը (http://bit.ly/331dP7k , Թուրքիայի Հայոց պատրիարքարանի պաշտօնական կայքէջ):
[53] Եկեղեցիներից շատերի միայն անուանումը բաւական չէ հասկանալու համար, թէ որ գիւղում են գտնուել, քանի որ նոյն անուանումով տարբեր եկեղեցիներ են եղել:

ARMENIAN INSCRIBED CHALICE VEILS (17TH-20TH CENTURIES)
(Summary)

ANNA ONANYAN
annaonanyan@mail.ru

The earliest known Armenian chalice veils date to the 17th century, unlike the Byzantine veils, which date back to 1208. The oldest Armenian veil with a dated inscription comes from 1688 and is preserved in the Treasury House of Etchmiadzin. Others, which were woven later between the 17th and 20th centuries, are preserved and displayed in various museums and private collections of the world.

The article is a study of the Armenian inscribed chalice veils embroidered with silk, cotton, gold and silver thread between the 17th and the 20th centuries.

The article focuses on the location and shape of the inscription, the colors and kinds of thread used. It describes the content of the inscriptions, which include the names of donors and their kin who had passed away, their surnames and profession, geographic locations, names of churches, monasteries and priests, reasons for the donation, etc. Furthermore, the author analyses the texts' linguistic features, the style and mode of the script, abbreviations used and dates, which provide important ethnographic, geographical and historical details.